

# ԴԱՐԱԼԱԳԵԱԶ ԿԱՄ ՎԱՅՈՑ ՉՈՐ\*)

Ղոզլջայու հասարակութիւնս.—Դարալագեազի արեւտահարաւային կողմը, գլխաւորապէս Ձիվայ չայի և Գնիշիկ չայի եզերքներին և նրանց ակունքները կազմող լեռների լանջերի վրայ, նաև Ուշգուրտ և Քեօմուրլու դաղ (Ղարադուղէյ) լեռների շարունակութիւնների վրայ գտնուում են Ղոզլջայի հասարակութեան գիւղերը, որոնք Շարուրի հետ հաղորդակցութիւն ունին հիւսիսից դէպի հարաւ հոտող Արփաչայի ակերով Բաշնորաշէն գնացող խճուղով, որը ձմեռները ընաւ չէ փակուում, իսկ Երեւանի գաւառի հետ Չանաղչիի և Բիրալուի գետտոււով, որը շատ անգամ ձմեռները փակուում է ձնով և նոր Բայազիտի գաւառի հետ երթեկութիւնը կատարուում է Ղարաեօղուշի և Չալ-դաղի ճանապարհներով:

Ղօզլջայու հասարակութեան կենտրոնը Արզա գիւղն է, որտեղ գտնուում է շինական կառավարութիւնը: Այդ հասարակութիւնը բաղկացած է 21 գիւղերից, որոնցից 3 գիւղերի բնակիչները հայեր են, 2 գիւղերինը քրդեր, իսկ 14 գիւղերինը—թուրքեր: Այստեղ դնում են թուրքերի և քրդերի գիւղերի անունները և նրանց ծովս կազմող տների որքանութիւնը 1886 թուին և ներկայումս.

| 1886 թուին.                | Այժմ.           | 1886 թուին.              | Այժմ.           |
|----------------------------|-----------------|--------------------------|-----------------|
| 1. Աշաղա-Դանձիկ. . . . .   | 18 . . . . . 23 | 9. Դաշ-Խարման. . . . .   | 14 . . . . . 15 |
| 2. Իւխարի-Դանձիկ . . . . . | 52 . . . . . 61 | 10. Քեօմուրլու . . . . . | 20 . . . . . 25 |
| 3. Արդարաս . . . . .       | 33 . . . . . 42 | 11. Ղօզլջայ. . . . .     | 50 . . . . . 57 |
| 4. Ալմալու . . . . .       | 33 . . . . . 38 | 12. Նամաղալի . . . . .   | 34 . . . . . 37 |
| 5. Աղ-Քլիսա . . . . .      | 9 . . . . . 13  | 13. Ձիվայ . . . . .      | 57 . . . . . 78 |
| 6. Վարդանիս . . . . .      | 20 . . . . . 23 | 14. Ղորջայ . . . . .     | 4 . . . . . 10  |
| 7. Հէշին . . . . .         | 28 . . . . . 33 | 15. Հէլթիլ . . . . .     | 29 . . . . . 43 |
| 8. Գենալու . . . . .       | 15 . . . . . 19 | 16. Ամաղու. . . . .      | 29 . . . . . 38 |

Դիմենք հայկական գիւղերի:

\*) Տես «Մուրճ» № 2—3

Դարալագեագի հարաւային կողմում Գնիշիկ շայի աջ ափին գտնուում է Գնիշիկ գիւղը:

Գնիշիկցիները մեծ մասը բնիկ հայեր են, այսինքն չեն գաղթել Պարսկաստանից. դրա համար էլ կոչուում են հին հայեր, ինչպէս Արգայ, Ռինդ, Աղաւնաձոր, Կուղչի և Գնդիվազ գիւղի բնակիչները: 1886 թուի ընտանեկան ցուցակով կազմում էին 35 տուն, այժմ եղել են 55 տուն: Ունի 560 հոգի բրնակիչ, որոնցից 291 հոգին արական են՝ 269 հոգի իգական: Դիւղի հողերի կէս մասը կազմում է իրանց սեփականութիւնը, իսկ կէս մասը Չիվայ գիւղի թուրք բէկերի՝ վէլբիւնների կալուածն է, որոնց գնիշիկցիները վճարում են  $30\frac{1}{2}$  բահրա: Այստեղ ցանում են ցորեն, գարի, հաճար, վուշ և կարտոֆիլ: Եօթըն բեռան տեղ տարածութեան վրայ ցանում են առւոյտ, որը հնձուում է տարին մի անգամ: Արտերը բոլորն էլ անջրգի են: Գնիշիկում քսան տներ օրինաւոր երկրագործներ են, որոնք ցանում են 10 բեռ սերմն, իւրաքանչիւր տունը: Այստեղ, ինչպէս Դարալագեագի շատ գիւղերում, հողը 1—5 աւելի արգիւնք չէ տալիս: Նոր հողաբաժնութիւններ սկզբից մինչև այժմ տեղի չեն ունեցել: УСТАВН. ГРАМОТ.ով, ինչ քանակութեամբ հող ընկել է ամեն մէկի ձեռքն, այնպէս էլ անփոփոխ մնում է: Անասնապահութիւնը համեմատելով միւս գիւղերի հետ, աւելի յաջող է: Ամեն մի տունը ունի 1—100 գլուխ ոչխար, 10—25 հատ տաւար, 1—3 ձի: Նաև 1—20 հատ մեղուներ ունին համարեա թէ  $\frac{2}{3}$  մասը: Գնիշիկում կայ մի դասեան արքունական ուսումնարան: Այդ գիւղի բնակիչները խաղաղ և աշխատասէր երկրագործներ են: Կլիմայի խոնաւութեան պատճառաւ շատերը հիւժուում, հիւանդանում են անգլիական ախտով: Գնիշիկեցիք ունին կարճ և լիք կազմուածք: Ապրում են այդ բարձր լեռների մէջ, կարելի է ասել, բոլորովին կղզիացած, որովհետև ձմեռները ճանապարհներն ամեն կողմից փակուում են ու մնում է բաց միայն Ամաղուի Նորավանքի ճանապարհը, որը տանում է դէպի Արփա, այն էլ այնքան քարքարոտ է ու ժայռոտ, որը պէտք է կուզէ կուզ անցնել ու հետևակ: Այդ գիւղը՝ շնորհիւ իր համփանների, որոնք իշխան տիրոջն են կրում, առ հասարակ Դարալագեագում, շինական պաշտօնակատարների և ոստիկանութեան երեսը չեն տեսնում, որովհետև իրանց մէջ ծաղած զանազան վէճերն ու հարցերը իրանք են վերջացնում, նոյնպէս էլ արքունական հարկը իրանք, առանց ոչ ոքի միջամտութեան, հաւաքում են ու յանձնում պետական գանձարանին ու ապահովագիրը յանձնում ըստ պատկանելոյն: Այդ իշխանից հոչակուած է մելիք Սարգիսը, որը մի օրինակելի և

անմահ անունն է թողել Դարալագեագում մոլորո՞ղների ժամանակ, իր անկաշառ բնատրու՞թեամբ, գնիշիկցիներին պաշտպան ու բարերար հանդիսանալով: Մեկիք Սարգիսն եղել է մի քաջ, աներկիր, վերին աստիճանի ճարտար, սրախօս, առակախօս, մի կարճահասակ մարդ, որի մասին կան զանազան անեկղոտներ: Սրանից յետոյ նշանաւոր է եղել Մեկիք Սիմոնը, նոյնպէս մի գովելի և բարեյիշատակ գիւղական իշխան: Գնիշիկցիները յաճախ կրկնում են շնորհն էլ Մեկիք Սարգիս ու Սիմոն չի ծընիլ. ժողովրդի ոտքը փուշ մտնելիս, հէնց են գիտում թէ իրանց աչքն ա մտնում. էն ժամանակն մեր բերնին համու հոտ կար, լազաթ կար. հոգևորականը, ծառայողը, բազազը գիւղը մտնելիս, առաջին կայնած, նրանց պատուում էին, օրինական պահանջմունքները կատարում ու հնպէս էին ճանապարհ քցում. համ ժողովրդի գլուխը չէր ցաւում, համ էկողները օրհնելով հեռանում. Աստծու աչքն էլ քաղցրանում էր գիւղի վրայ, շնորհք ու բարաբեաթը լցւում էր գիւղը»:

Ուլգուրտ լեռնից դէպի հարաւ, դէպի Արփաշայ տարածուող սարահարթի վրայ գտնւում է Աղանաձոր (այժմ Այնազուր) գիւղը:

Աղանաձորը Գնդեվազի, Մարտիրոսի, Ազատակի, Փոռի և Բաշքիանդի նման բացարձակ և ազատ տեսարան ունի, մանաւանդ արևելեան կողմից, որտեղից մինչև անգամ Դարալագեագը Ձանգեզուրի և Նախիջևանու գաւառներից բաժանող սահմանագծերը երևում են. պակաս հիանալի չէ և արևմտեան կողմի տեսարանը, որտեղից նայողի աչքին թարմ կանաչով վառւում ու շնչում են՝ խաղողի այգիներով ու պտղատու ծառերով զարդարուած ձորը և Բաղշաջը \*): Աղանաձորի կամ Այնազուրի սարահարթի վրայով, արևելքից դէպի արևմուտք, Երևանի գաւառի ճանապարհն է անցնում, իսկ արևմտահարաւից դէպի արևելահիւսիս, Բաշորաշէնայ—Նոր-Բայազիտի խճուղին, Աղանաձորից երկու վերստ հեռաւորութեամբ: Ամբողջ սարահարթը քարքարոտ է, աւազոտ և համահաւասար Դարալագեագի միջակ լեռնային գիւղերին. սա է կազմում Աղանաձորին հաց մատակարարողը, որի վրայ գտնւում են գիւղի վարելահողերը: Այդ հողը կարող էր մեծ հարստութեան աղբիւր լինել նրա համար իր բաւարար տարածութեամբ, եթէ միայն չխանգարէր նրան ոռոգող ջուրը: Առանց ջրի դաշտերը այնքան էլ արդիւնաւէտ չեն, սևահող չլինելու պատճառաւ, ըստ

\*) Բաղշաջը Ուլգուրդ լեռան կողմն է, ծածկուած արեւստակա՞ն թաւառով:

որում՝ ընակիչներն այնքան աչքի ընկնող հարստութիւն չունին, միջակ կերպով ապրող հայ գիւղերից մէկն են կազմում. այնպէս որ 97 տանից բաղկացած Աղաւնաձորը միայն մի տուն ունի 1000 բուրլի դրամագլխի տէր: Վարելահողերը քարքարոտ լինելու պատճառաւ գութանի փոխանակ գիւղացիները հերկում են դաշտերը արօրով— (վեցկիով). բոլոր ցանքերը աշնցան են այստեղ: Երեք-չորս համփայ տներ ցանում են 9—10 բեռ սերմն ամեն մէկը, վերցնում են իւրաքանչիւրը 40—45 բեռ հաց, գիւղի մնացած մասը այս թուից պակաս են ցանում: Գիւղի վիճակը բարելաւացնելու համար հնարաւորութիւն կայ  $1\frac{1}{2}$  վերստ հեռաւորութեան վրայ լիճ շինելու «Արանա» անուանուած տեղում, որը հին ժամանակը լիճ է եղել՝ թէև այդ կը նստէ նրանց վրայ մինչև 1200 բուրլի ծախս, բայց միանգամայն գիւղը կը փրկուի այդ դրութիւնից: Գիւղացիք այդ զգում են, ցանկութիւն ունին և մի տեղ հաւաքուելիս միշտ մտմտում են իրագործելու այդ, սակայն բանը գլուխ չէ գալիս, որովհետև աղքատները չեն կարողանում վրձարել այդ գումարը, հարուստներն էլ չեն կամենում նրանց համար զոհողութիւն անել, ուստի երկու կողմերն էլ դաշտերի ոռոգումը թողնում են Աստուծոյ կամքին ու բախտի բերմունքին: Անասնապահութիւնը ևս նախանձելի դրութեան մէջ չէ, խոտ ու դարմանի սպիւսութեան պատճառաւ. այնպէս որ ամենաշատ խոտ հնձողը 2000 խրձից աւելի խոտ չէ հնձում: Գլխաւոր անասնատէրերը երեք տուն են, որոնցից ամեն մէկն ունի 200 գլուխ ոչխար: Քսան տներ ոչ ոչխար ունին, ոչ կով և ոչ լծկան տաւար: Աղաւնաձորցիները պարապում են նաև այգեգործութեամբ: Այստեղ այգիները բունում են 300—350 փթան տեղ տարածութիւն: Փթան տեղից ստացւում է 30—35 փութ խաղող, ձմեռները տաք լինելու պատճառաւ խաղողի որթերը չեն թաղում այստեղ. թէև խաղողը հասնում է և գինին ստացւում է, բայց գինին այնպէս գովելի չէ, ինչպէս Մալիշկայի, Դոյթուլի և Արգայի գինիները: Գիւղացիներից աղքատները խաղողը բեռներով տանում են Նոր-Բայազետի գաւառը ու փոխանակում են այստեղ ցորնի ու պարու հետ: Իբրև լեռնային գիւղ և ծաղկաւէտ դաշտեր ունեցող, մեղուապահութիւնն ևս ունի այստեղ իր բաժինը. կրկու տներ ունին 200-ից աւելի միզուի փեթակներ, մնացածները պակաս այդ թուից: Երամապահութիւնը նոր է մուտ գործել այստեղ, բաւականին յաղող փորձեր են եղել, և յոյս կայ, որ բոլորն էլ վարակուին այդ օգտակար պարապմունքով: Կանաչք լաւ և օրինակելի կապերտներ ու գորգեր են գործում: Առ

հասարակ Աղանաձորի կանայքը սովորութիւն չունին դաշտերում բանելու, հունձ անելու ինչպէս միւս լեռնային գիւղերում, օրինակ, Մարտիրոս, Ենկիշայ, Գնիշիկ և այլ գիւղերում, սակայն կալի մէջն օգնում են տղամարդերին ցորեն ու գարի ծեծելու ժամանակ: Աղանաձորցիները բնիկներ են, խօսում են հին հայոց լեզուով, ուստի և կրում են «հին հայ» տիտղոսը: Բնակիչների թիւը ընդամենը 980 հոգի է, որոնցից 450 հոգին արական են 530 հոգին իգական: 1886 թուին կազմում էին 97 տուն: Սաստիկ ուսումնասէր մարդիկ են. երկու տարուայ ընթացքում վիճեցին դրացի Արփայ գիւղի բնակիչներին հետ միգասեան արքունական ուսումնարանը այնտեղից այստեղ փոխադրելու և երբ չյաջողուեց, վճռեցին իրանք իրանց ծախսով բաց անել ուսումնարանը: Վարչութիւնը գնահատելով նրանց ուսումնասիրութիւնը և միևնոյն ժամանակ մտնելով նրանց նիւթական աննախանձելի դրութեան մէջ, որոշեց տարեկան 700 ըուրլի նպաստ յատկացնել այդ ուսումնարանին: Գիւղի օդը և ջուրը հիանալի է, թէև մոծակներից զերծ էլ չէ: Հիւանդութիւններ քիչ են պատահում այստեղ: Բնակիչները առողջ մարդիկ են: Կան մի քանի տներ, որոնց մէջ 20—30 հոգի ապրում են միասին հաշտ և միաբան: Կուրներ քիչ են պատահում այստեղ. մինչև այժմ մի սպանութիւն է տեղի ունեցել, այն էլ ոչ թէ դիտամար, այլ պատահամար և ոչ թէ սրի կամ գնդակի, այլ փայտի հարուածով: Աղանաձորցիներին մեծ ֆլասս են պատճառում նրանցից չորս վերստ հեռաւորութեան վրայ բնակած Նամազալի գիւղի քրդերը, իրանց գողութիւններով:

Աղանաձոր գիւղը Եգոր Թառուսեանցի կալուածն է, որը բաղկացած է չորս մասերից, այսինքն Աղանաձորից, Բաղչաշից, Դալղալից և Նամազալից: Սրանցից Աղանաձորը և Բաղչաշը աղանաձորցիների ձեռքումն է, որոնք Թառուսեանցին վճարում են  $\frac{30}{4}$  բահրա: Նամազալիում բնակւում են մօտանի ցեղի քրդերը, որոնք այս տարի պարտաւորուել են բահրա վճարել Թառուսեանցին նահանգական դատարանի վրձնով: Դալղալիցը, գտնւում է Արփաշայի աջ ափին, Աղանաձորի սարահարթի արեւելահարաւային անկիւնում և բռնում է ընդամենն 600 դեսեստին տարածութիւն. նրա կէսը գնել են Թառուսեանց Եգորից գնիշիկցի Օհանեանները և Ուլիս նորաշէնցի Մելիք Նազարեանցները. իսկ միւս կէսը պատկանում է Շուշիի Սուրբ Աստուածածնայ Ազուլեաց եկեղեցուն, որին կտակել է Սարգիս Թառուսեանցը:

Դալղալի հարաւային կողմը, Արփաշայի ձախ ափին,

Հէրթիչ թըքարնակ գիւղի գլխին դեռ ևս իր աւերակներով կանգնած է շաքարածէ լեռան գլխին մի աւերակ ամրոց, որը ինչպէս կարծում են շատերը, պէտք է Անապատ բերդը լինի:

Ուլզուրտ լեռը հարաւային կողմից իր դապաթի ճեղքուածքի վրայ ունի մի տափարակ հրապարակ, երեսը դարձրած դէպի արեւելահարաւ, 4—5 վերստ հեռու Աղանաձորից: Այդ հրապարակի վրայ դրած է Աստուածածնայ կիսաւեր վանքն իր արձանագրութիւններով:

Արփա գիւղից մի վերստ հեռաւորութեան վրայ դէպի հիւսիս, Արփաշայի աջ կողմից սկսւում է Չիվաձորը ու գնում է հասնում Դիդիվան և Միշանլու լեռների բարձրութիւններին, որտեղից սկիզբն առնելով հոսում է Չիվա չայը համանուն ձորի միջով ու խառնւում է Արփաշային: Ամառները Չիվա չայը այնքան բարակում է, որ ջուրը չէ հասնում Արփաշային: Արփաշայից մօտաւորապէս 10 վերստ հեռաւորութեան վրայ, արեւելքից դէպի արեւմուտք, կտրւում անցնում է ղոզլաղցու հասարակութեան միջով դէպի Երևանի գաւառը գնացող Դարալագեազի ճանապարհը \*): Այդ ճանապարհից մէկ վերստ ու կէս դէպի հիւսիս, ձորի մէջ, կաթսայածէ բլուրների ծոցում, Չիվա չայի աջ և ձախ ասիերին դրած է Ելփին զիւղը: Նրա կողքի ճանապարհովն են անցնում գարնանը շարուրցիների և թափառական ըրդերի կոչերը դէպի Այրիջայի արօտատեղիները:

Դիւղի տեսարանը թէև փակ է, բայց ընդարձակ է, կենդանատեսիլ, զարդարուած խաղողի այգիներով, բարգի և ուռի ծառերով, որոնք հիանալի կերպով աճում են այստեղ: Ելփինը գտնւում է Դարալագեազի և Երևանի գաւառի սահմանագծի մօտ: Այստեղից օր ու կէսուայ մէջ կարող է հասնել Երևան քաղաքը թէ ձիաւորը և թէ հետևակը:

Ելփինի բնակիչները գաղթել են Պարսկաստանի Սալմաստ և Սոմի գաւառներից. խօսում են սալմաստցիների լեզուով: 1886 թուի ընտանական ցուցակով կազմում էին 68 տուն, այժմ եղել են 110 տուն: Բնակիչների թիւն է 785, որոնցից 425 հոգի արական են 360 հոգի իգական: Պարապում են երկրապործութեամբ, անասնապահութեամբ, այգեգործու-

\*) Այդ ճանապարհի վրայ, Ելփինի հարաւային կողմը գտնւում է այն վայրի տանձի ծառը, որը անուանւում է «Ջնթո աղաջի»: Ամեն մի անցորդ, եթէ այդ ծառի ճիւղերից չկարէ ու չփաթաթէ իր ցնցոտին նրա վրայ, զանազան հիւանդութիւններ և անյաջողութիւն կը գանէ բնակիչների կարծիքով:

Թեամբ, մասամբ ևս մեղուապահութեամբ: Վարելահողերը բաւարար չեն, ամեն մի հոգուն հասնում է 2 սոմար \*) հող, մէկ սոմարը ջրային, իսկ միւսն անջրդի: Վարելահողերի պահասութեան պատճառաւ հարկադրուած են ցանել Գեօմուրլու, Արդարաս, Ալմալու և Հէշին գիւղի բնակիչներէ հողերը կիսանում: Ամառները արտերը ոտգող ջուրը չէ բաւականանում, ուստի ելփինցիները անընդհատ վիճում են ջրի համար Գենալու գիւղի թուրքերի հետ: Վարելահողերի կէսը ջրովի են, կէսն անջրդի: Հացահատիկներից ցանում են այստեղ, ցորեն, գարի, մասամբ կորեկ, սիսեռ և ոսպ: Տասն, տասն և հինգ բեռան տեղ տարածութեան վրայ բռնում են խաղողի և այլ պտղատու ծառերի անտառները: Խաղողից լաւ գինի չէ ստացւում, ուստի նա միայն ուտելու համար է: Թէև ամառուայ արօտատեղիները չեն բաւականացնում, սակայն անամապահութիւնը բաւականին յաջող է: Մի տուն ունի միայն 200 հատ ոչխար, իսկ մնացածները 60-ից աւելի ոչխար չունին: Ելփինցիները գործում են ամուր խսիրից ջականեր: Ջական հնձում են Արփայ գիւղի մօտ գտնուած ճահճի սէղերից: Այս վերջին տարիները այդ սէզը չորանում է, որի հետ և կը սպառուի խսիր գործելը: Մսիքը փոռւմ են թաղիքի կամ գորգի տակ, որը պահպանում է նրանց խոնաւութիւնից ու փչանալուց: Մի խսիրը դիմանում է մինչև տասն տարի: Մսիքի հատը ծախւում է 2—3 բուբլի:

Համարեա ամեն մի տուն ունի իր ջուլհակի գործարանը, որի մէջ ելփինցիները դարալագեագիների հին սովորութեան պէս կտաւ են գործում: Ելփինցիների տնտեսական դրութիւնը բաւականին լաւ է և օրէցօր առաջ է գնում: Տների մաքրութիւնը, բարձրութիւնը և շքեղութիւնը՝ համեմատելով միւս գիւղերի հետ՝ աչքի է ընկնում: Ելփինցիները աշխատասէր, առողջ և վայելչակաղմ մարդիկ են, ունին հինգ աղբիւր, որոնցից խմելու ջուր են վերցնում: Երջապատուած լինելով քրդաբնակ Դաշ-Սարման և Թրքաբնակ Արդարաս, Ալմալու, Գերալու, Վարդանիս, Հէշին և Գեօմուրլու գիւղերով, չէ ազատում նրանց գողութիւններից, որոնց ելփինցիները արքունական հարկերից աւելի գումար են վճարում: Ղարա-եօղուշի ճանապարհով անցնելիս՝ գարնանը քրդերը նոյնպէս նրանց անպատիժ չեն թողնում:

Ելփինցիները դեռ ևս գերծ չեն իրանց՝ Պարսկաստանից

\*) Սոմարն ունի 4 փութ 14 ֆունտ.

գաղթած հայրերի ռեակալութիւնից, երկպառակութիւնից ու կուսակցական ոգոյց, որի պատճառով շատ անգամ քծնուած են շինական պաշտօնակատարի առաջ և մինչև անգամ նրա ստոր պահանջները կատարուած, որպէս զի նրանց միջոցաւ ճընշուած գործեն իրանց հակառակորդի վրայ:

Աղանձածորից հինգ վերստ հեռաւորութեամբ դէպի արևմտահարաւ գտնուած է Ռինտ գիւղը: Գիւղից մի վերստ ներքև հարաւային կողմից անցնուած է արևելքից դէպի արևմուտ Դարալագեագի Երևան գնացող ճանապարհը:

Ռեստեցիները 1886 թուին 36 տուն էին, այժմ 50 տուն են եղել: Բնակիչների թիւն է ընդամենը 501, որոնցից 283 հոգին արական են, 218 իգական: Այդ գիւղի բնակիչներն էլ հին հայեր են ու խօսում են հին հայոց լեզուով: Առողջապաւ շինական հասարակութեան մէջ Ռինտը հայ գիւղերից ամենաաղքատ գիւղն է և այդ աղքատութեան պատճառը գլխաւորապէս ջրի պակասութիւնն է:

Քանի Ուլզուրտ լեռան բարձրութիւնների վրայ ձիւնը չէ սպառուել, բաւականաչափ ոռոգելու ջուր գալիս ու մատակարարում է Ռեստեցիներին երկու առտներով, իսկ երբ ձիւնը հալուած, վերջանում է, ջուրը խիստ նուազում է: Սրանից յետոյ Ռեստեցիներն օգտուած են երեք լճերով, որոնցից մէկը գտնուած է գիւղից վերև երկու վերստ հեռաւորութեան վրայ, իսկ միւս երկուսը գիւղի մօտ: Հին ժամանակի ունեցել են մի ջրամբար, որը կարող էր փրկել նրանց այդ թշուառ դրութիւնից, բայց դժբախտաբար այդ ջրամբարը խլել են նրանցից Առողջայ գիւղի թուրքերը, որոնք ոչ իրանք են օգտուած և ոչ Ռեստեցիներին են թոյլ տալիս օգտուելու: Հողը թէև յարմար է չալթուկ և բամբակ ցանելու համար, բայց ջրի սակաւութեան պատճառաւ չեն կարողանում ցանել: Մօտաւորապէս վեց բնուան տեղ տարածութեան վրայ Ռեստեցիներն ունեն խաղողի այգիներ և այդքան էլ տեղ պտղատու ծառեր, գլխաւորապէս ծիրանի, խնձորի և սալորի: Անձրեային տարիները հողը 1—6 հաց է տալիս: Գիւղի կէս մասը հաց ծախ են առնում: Վեց տներ լճկան տաւար չունեն, ուստի չեն կարողանում իրանց դաշտերը հերկել, ցանել: Հարուստ անասնատէր չորս տներ կան, որոնք ունեն 50—60 գլուխ ոչխար և 6—7 տաւար. մնացածները պակաս այդ թուերից: Մեղուապահութիւնն ունի իր սակաւ բաժինն այստեղ նոյնպէս:

Աղքատութիւն, պանդխտութիւն. մտաւարապէս տասն հոգի գնում են Բագու և Տփխիս մշակութեամբ փող վաստակելու: Ռուսաստան գնացողներ չկան: Առ հասարակ այս գիւղին մեծ ֆրաս են պատճառում Դողջայ գիւղի հարուստ և զօրեղ թուրքերը, օրինակ հողերը խլում են, ցանքերն ու խոտանոցներն արածացնում, հնձած արտերից ցորենները գողանում ու տանում: Գողանում են նաև ինչ որ ճանկերն ընկնում է նոյնպէս էլ տիրում են Ռնտեցիների առուների ջրերին: Մի խօսքով ճնշուած Ռնտեցիների ու Դողջացիների վէճն անվերջ է և միշտ գործը վճուում է դատաստանատներում վերջինների օգտին, որովհետև զօրեղը միշտ արդար է...

Արփայայի ափին զետեղուած է Արփայ կամ Արաւիայ գիւղը հին Արփայից \*)  $\frac{1}{3}$  վերստ հեռաւորութեամբ դէպի հարաւ: Արփայի արևելեան կողմից գտնուած հեղեղատի ուղղութեամբ բարձրանալով դէպի վեր, 3 վերստ հեռաւորութեան վրայ կը հասնէք Հրաշկայ կամ Հրասեկայ բերդին, որն արփեցիները ձգնաւորի բերդ են անուանում:

Արփան 1836 թուի ընտանեկան ցուցակով կազմում էր 55 տուն. այժմ եղել են 80 տուն: Բնակիչների մի մասը գաղթել են այստեղ Երևանից, Բայազետից և Ղարաբաղից, իսկ մնացած մասը բնիկներ են, այսինքն «հին հայեր». խօսում են հին հայերի լեզուով: Ունի 554 հոգի բնակիչ, որոնցից 295 հոգին արական են 259 հոգին՝ իգական: Պարապում են երկրագործութեամբ, անամնապահութեամբ, այգեգործութեամբ ու շերամապահութեամբ: Վարելահողերը սակաւ են այստեղ, այնպէս որ ամենից շատ ցանողը 4 բեռնից աւելի հացահատիկ չէ ցանում: Հողաբաժնութիւն տեղի չէ ունեցել այստեղ և չի էլ կարող ունենալ, որովհետև գիւղը կալուածական գիւղ է, հողերը УСТАВН. ГРАМОТ-ով ինչպէս առաջուց ստացուած են, այնպէս էլ անփոփոխ մնում են, մինչդեռ կան բազմացած ընտանիքներ, որոնք կամ հող չունեն կամ եթէ ունեն էլ, շատ սակաւ. օրինակ 10 հոգուց բաղկացած մի ընտանիք ունի 2 փթան տեղ, իսկ դրա հակառակ 2 հոգուց բաղկացած ընտանիքն ունի 15 փթան տեղ, կամ աւելի: Տասը տուն ունին բաւականաչափ հող, հինգ աներ ունին իրանց ընտանեաց հասնելիք հողից աւելի հողեր. մնացած բոլորն էլ հողի կարօտութիւն ունին: Արփայում գրեթէ բոլորն էլ հացը ծախու են առնում: Զրային հողերում հացը 1—7, իսկ անջրդի հողերում 1—5 արդինք է տալիս: 25 խա-

\*) Արփան Դարալագեազի երկրորդ պատմական գիւղն է, Հողոցիմից յետոյ:

լուար տարածութեան վրայ ցանում են բամբակ և չալթուկ հերթով, այսինքն մի տարրի ցանում են չալթուկ, իսկ հինգ տարրի բամբակ, որը հնձուում է տարրին երեք անգամ: Մէկ փութ տեղից ստացուում է երեք փութ բամբակ, իսկ մէկ փութանոց տեղից քսան փութ չալթուկ: Արփեցիք ստանում են տարեկան 1000—1500 փութ բամբակ ու վաճառում են 10,000—15,000 ռուբլով: Քոսան բեռան տեղ տարածութեան վրայ ունին խաղողի այգիներ, որոնցից ստացուում է պատուական խաղող և գինի, որը գերազանցում է ամբողջ Դարալագեազի գինիներից: 10—15 տներ վերցնում են մինչև 40 փութ գինի: 30 տներ սկսել են պարապել ջերմեռանդ կերպով շերամապահութեամբ. շերամը վաճառում են Նախիջևան քաղաքում: Այդ տները 1—24 մսխալ սերմ են դնում: 30 տներ ունին 100—150 հատ ոչխար և 15—20 հատ տուար: Արփեցիները ձեռք են բերել երեք տեղերում ամառուայ արօտատեղիներից: Քիչ տներ այստեղ պարտք ունեն. մնացողներն ապրում են ապահով դրութեան մէջ, սակայն մեծ դրամագլխի տէրեր էլ չկան. 7—8 տներ ունին 200—400 ռուբլի գումարներ:

Արփան պատկանում է Վերին Դանձիկ գիւղում և Չիվա գիւղաբնակիչ թուրք բէկերին, վէջիւներին, որոնց արփեցիները բաղերի տեղերի համար սոմարի տեղին վճարում են 1 ռ. 20 կոպ. իսկ մնացած հողերից ստացուած բերքից  $\frac{30}{100}$  բահրա են տալիս: Վաղուց է որ քահանայ չոնին ու չեն էլ հոգ տանում այդ մասին. հոգևոր պէտքերը կատարում են մերձակայ գիւղի քահանաները: Դիւղի մօտ, գետի ափին ունեն մի պատուական աղբիւր, որից խմելու ջուր են վերցնում, բայց դժբաղդաբար այդ աղբիւրը երեք ամսուայ ընթացքում ծածկուում է Արփաչայի հոսանքով: Արփան Դարալագեազի ամենաչոք գիւղերից մէկն է, որտեղ ամառը մոծակներն են թագաւորում, իսկ ձմեռը ցուրտը: Բնակիչների  $\frac{2}{3}$  մասի տներում գործում են գորգեր և կապերտները, որոնք ծախւում են 10—50 ռուբլով. սրանց լայնութիւնը լինում է սովորաբար 2—2 $\frac{1}{2}$  արշին իսկ երկարութիւնը 4—4 $\frac{1}{3}$  արշին: Այստեղ գործում են նաև բամբակից կապերտ, որոնք այն գերազանցութիւնն ունին, որ ամառները ցեցը չէ ուտում: Արփեցիները ապրում են աւելի ճոխ և մաքուր, քան թէ Ղոզլայու շինական հասարակութեան միւս հայ գիւղերը: Բացի երկու երեք տներից, միւսները ամբողջովին առաջինն են Դարալագեազում իրանց անհիւրասիրութեամբ: Արփեցիների անհիւրասիրութիւնն պռած է դառել Դարալագեազում, որի մասին զանազան անեկտողներ են անգիր դառել, օրինակ. մէկը իրիկուան դէմ նեղուած ցըր-

տից, գիշերից ու սովից դիմում է մի ջահիլ արփեցու, խնդրելով որ տեղ տայ իրան գիշերելու նրա տանը: Արփեցին մերժում է. հիւրն այնքան թախանձում է, որ տան տիրոջ հայրը գիշանելով վերջապէս հիւրի թախանձանքին, հրամայում է որդուն նրա ձին քաշել գոմը. որդին կատարում է հօր հրամանն ու փնթփնթում. «Տէր Աստուած, տէր Աստուած. ախր տեսայ ոչ էլ էս գիշեր շունը մեր տաշտից մին հաց տարաւ, դու ասիլ մի էդ դոնադը պիտմա գայ հացն ուտէ, էլ լի»: Այդ դրուժիւնիցն է յառաջացել այն առածը, որ կրկնում են. «Արփիայ գէթդն չորակ գեթու, Արփադան չըխդն այադ գեթու», այսինքն, որ Արփայ գնացիր, հաց վերցրու հետդ, Արփայից դուրս եկար, շտապիր հասնել տունդ:

Պոռնիկութիւնը նոյնպէս տարածւում է այստեղ. քիչ տներ կան, որ ամեն մէկը մի բրդուհի հարձ չունենան. պատահում է այսպէս. ամեն մէկը քրդին վարձում են մշակ, իսկ կնոջը հարձ: Այդ պոռնիկութեան պատճառով 1900 թուին գիշերը սրախողխող եղաւ արփեցի մի ընտանիք:

Ղոզլայու շինական հասարակութեան կառավարութիւնը և միդասեան արքունական ուսումնարանը գտնուում են Արփայու մէջ Հակառակ Դարալագեազի միւս հայ գիւղերի սովորութեան, այփեցիները զարմանալի համամիտ և միախորհուրդ են հանդիսանում գիւղի չարի ու բարու, ֆլասի և օգտի համար գործելու մասին: Ծնորհիւ այդ միութեան՝ արփեցիները գրաւեցին օրինական կարգով Սաչիկ, Գնիշիկ, Հորբադդ և Այսասի գիւղերից ամառուան արօտատեղերից, որոնց փրկեցին իրանց՝ ամառուայ շոգի ու կրակի մէջ տապակուող իրանց մատաղ սերունդը իրանց տաւարն ու ոչխարը: Արփեցիները իրանց՝ դիւանագիտութեամբ մաքառելով իրանց կալուածատէր թուրք բէկերի Վէջիլիմների և միւս հարևան գիւղերի հետ, միշտ յաղթել են նրանց դատաստանական կարգով և ահ են տարածել բոլորի վրայ: Դրա համար բոլորն էլ այն համոզմունքն են գոյացրել, որ նրանց հետ վիճելն անօգուտ է:

Միջայէլ Տէլ-Անտիքեան